



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 2011 թ.

<Լոյիկ> ՍՊԸ տնօրեն Լ.Ջանոյանին  
հասցե՝ ք.Երևան, Մայակի 36, բն. 10  
պատճենը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետ  
պարոն Կ.Կարապետյանին

Կից ուղարկվում է Ձեր 28.12.2011թ. գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 10.01.2012թ. թիվ 1/2 որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/2

10 հունվարի 2012թ.

Քննարկվեց <Լոլիկ> ՍՊԸ տնօրենի 28.12.2011թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 21.12.2011թ-ի թիվ 177363 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 21.12.2011թ-ի թիվ 177363 որոշմամբ <Լոլիկ> ՍՊԸ տնօրեն Լենա Ջանոյանը սահմանված ժամկետում հարկային տեսչություն 2008թ. շահութահարկի հաշվարկները, 2009, 2010թ.թ. պարզեցված շահութահարկի հաշվարկները, 2008, 2009, 2010թ.թ. 1-ից 4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի, եկամտահարկի և սոցիալական վճարների հաշվարկ-հաշվետվությունները, 2008թ-ի հաշվապահական հաշվեկշիռը չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169<sup>12</sup> հոդվածի 1-ին մասի և 169<sup>1</sup> հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 50 000 դրամ: Նշված որոշումը <Լոլիկ> ՍՊԸ տնօրենին ուղարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 23.12.2011թ-ի թիվ 6880 գրությամբ:

<Լոլիկ> ՍՊԸ տնօրենի գանգատում մասնավորապես նշված է.

1995թ-ից ընկերությունը գործունեություն չի իրականացրել <Բազալտ> ԲԲԸ-ի կողմից ընկերության ջերմոցները սեփականաշնորհելու պատճառով: Նրանց է մնացել <Լոլիկ> ՍՊԸ հիմնադրի՝ կողմից ներդրված ակցիաները և կապիտալ ներդրումները, որի պատճառով հիմնական միջոց և այլ կապիտալ ընկերությունը չունի: Հաշվեկշիռը Օ-յական է, ընկերությունը գույքահարկ և հողի հարկ վճարող չի հանդիսանում:

2006թ-ին Նոր-Նորքի ՀՏ-ից ստացել են ծանուցագիր, որին պատասխանել են, որ Մոսկվա մեկնելու պատճառով խնդրում են Օ-յական հաշվետվություն չհանձնելը համարել հարգելի և այդքանով հարցը փակվել է:

2011թ-ի փետրվարից վարձակալական պայմանագրով աշխատեցրել են Արին-Բերդի 13 հասցեում գտնվող հյուրանոցը: 2011թ-ի հոկտեմբերից ընկերությունը դադարեցրել է գործունեությունը և սպասում է տարեկան հաշվետվությունների պատշաճ ներկայացմանը:

2011թ-ին տեղափոխվելով Էրեբունու ՀՏ երկու ծանուցագիր և որոշում են ստացել: Յուրաքանչյուրի համար տվել են բանավոր բացատրություն:

Հաշվի առնելով վաղեմության ժամկետի անցած լինելը, ինչպես նաև արխիվային նյութերի բացակայությունը, <Լոլիկ> ՍՊԸ տնօրենը խնդրում է իրեն ազատել 50 000 դրամ վարչական պատասխանատվությունից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, լսելով <Լոլիկ> ՍՊԸ տնօրենի և Էրեբունու ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Քննարկվող դեպքում, ըստ էության, ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 21.12.2011թ-ի թիվ 177363 որոշմամբ <Լոլիկ> ՍՊԸ տնօրեն Լենա Ջանոյանը վարչական տույժի է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169<sup>12</sup> հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու, այն է՝ 2008թ. հաշվապահական հաշվեկշիռը չներկայացնելու համար:

Քննարկվող դեպքում 2008թ-ի հաշվապահական հաշվեկշիռը հարկային տեսչություն ներկայացվելու վերջնաժամկետը, համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի, հանդիսացել է 2009թ-ի ապրիլի 15-ը: Այսինքն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169<sup>12</sup> հոդվածի 1-ին մասով սահմանված զանցանքը <Լոլիկ> ՍՊԸ կողմից կատարվել է 2009թ-ի ապրիլի 16-ին, որի համար <Լոլիկ> ՍՊԸ պաշտոնատար անձը կարող էր վարչական տույժի ենթարկվել մինչև 2009թ-ի հունիսի 16 ներառյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 21.12.2011թ-ի թիվ 177363 որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 21.12.2011թ-ի թիվ 177363 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ